

Ակցիայի անցկացման պայմաններ և կանոններ

1.1 Ակցիայի պայմաններ

- 1) Ակցիայի ժամկետ՝ 15.11.2017թ.-ից մինչև 15.02.2018թ. ներառյալ
- 2) Ակցիայի անվանում՝ #երբիբրականանումեներազանքները
- 3) Ակցիայի մրցանակներ՝ Ակցիայի ավարտից հետո 100 ամենաշատ գումարի անկանխիկ վճարում ապահոված Visa քարտապանների միջև /նվազագույնը 300,000 ՀՀ դրամ/ (այդ թվում ինտերնետ խանութներում, բացառությամբ կոմունալ և այլ անկանխիկ վճարումների, որոնք իրականացվում են բանկոմատների և ինտերնետ կայքերի միջոցով) կխաղարկվի 8 mini iPad և գլխավոր մրցանակ՝ 2 տուրիստական փաթեթ դեպի Դիսնեյ Լենդ /յուրաքանչյուրը 2 անձի համար/: Սույն Ակցիան չի տարածվում Բանկի աշխատակիցների վրա:

1.2 Ակցիայի խաղարկության անցկացման կանոններ

1. Խաղարկությանն իրավունք ունեն մասնակցել Բանկի՝ ՀՀ քաղաքացի Visa քարտապանները, որոնք ունեն անձը հաստատող փաստաթուղթ, այսինքն՝ ակցիայի մասնակիցների լիազորված անձինք չեն կարող մասնակցել խաղարկությանը:
2. Սույն Ակցիայի շրջանակներում խաղարկվում է 8 mini iPad և գլխավոր մրցանակ՝ 2 տուրիստական փաթեթ դեպի Դիսնեյ Լենդ /յուրաքանչյուրը 2 անձի համար/:
3. Հաղթողներին տրամադրվում են միայն Ակցիայի շրջանակներում ներկայացված մրցանակները, այսինքն՝ նշված մրցանակների փոխարեն այլ մրցանակ և համարժեք գումար չի տրամադրվում, բացառությամբ դեսպանատան կողմից վիզայի մերժման դեպքում:
4. Մրցանակի չօգտագործման դեպքում Հաղթողն իրավունք չունի պահանջել Ակցիայի կանոնների և պայմանների փոփոխություն:
5. Անցկացվող Ակցիայի շրջանակներում մրցանակները տրամադրվում են բացառապես Ակցիայի հաղթողներին, այսինքն՝ մրցանակը չի տրամադրվում այլ անձանց:
6. Խաղարկությունն անցկացվում է հաճախորդների ներկայությամբ պատահական ընտրության սկզբունքով /խաղարկության անցկացման օրվա, ժամի և վայրի մասին հաճախորդները կտեղեկանան Բանկի Call Center-ի կամ SMS-հաղորդագրության միջոցով/:
7. Մրցանակի ստացման և օգտագործման ժամկետները նշվում են խաղարկության ընթացքում տրամադրված հատուկ հասվաստագրերի վրա:
8. Նախքան Խաղարկության սկիզբը մասնակիցներն անձը հաստատող փաստաթղթերով մոտենում են Բանկի աշխատակիցներին, որոնք մասնակցին նույնականացնելուց հետո տրամադրում են վերջինիս անվանական կտրոնը, որը բաղկացած է 2 մասից: Կտրոնի մի մասը տրամադրվում է հաճախորդին, իսկ մյուսը դրվում է հատուկ կուլբայի մեջ խաղարկության անցկացման համար:
9. Խաղարկության ընթացքում հաղորդավարները հատուկ նախատեսված կուլբայի միջից հանում են մասնակիցների անունները, ստուգում կտրոնի երկրորդ մասի հետ և միայն դրանից հետո տրամադրում մրցանակը /մրցանակը տրամադրվում է խաղարկության սրահում գտնվող մասնակիցներին/:
10. Բանկը պատասխանատվություն չի կրում հաճախորդի կողմից տրամադրված սխալ կոնտակտային տվյալների համար կամ վերջիններիս փոփոխման դեպքում Բանկին չտեղեկացնելու համար: